## Արձանագրություն N 4

## «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/57» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26.05.2020թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Բալասանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մուկուչյան (ԳԱ), Է. Ղազարյան (ԳԱ)
Մ. Ջալաթյան (ԲԱ), Մ. Շահինյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/57» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման մասին

---

(Դ. Բալասանյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 13.05.2020 թվականին «Արտշին-1» ՍՊԸ-ին ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/57 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում / պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, սակայն Ընկերությունը 25.05.2020 թվականին գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարան հրաժարվելով ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժիններից և ներկայացրել միայն պայմանագիր 4-րդ չափաբաժնի՝ 4890000 ՀՀ դրամ արժեքով Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Օրբելի 33ա շենքի թեք տանիքի հիմնանորոգման աշխատանքների համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ընկերությունը համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվում է 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու իրավունքից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.-ընթացակարգի /անգործության ժամկետի ավարտից հետո/ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցներին:

1-ին չափաբաժնի մասով «Հարսնաձոր» ՍՊԸ-ին

3-րդ չափաբաժնի մասով «Օրինոն 7» ՍՊԸ-ին

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------------------------------------- Դ. Բալասանյան

Անդամներ՝ ---------------------------------------- Ն. Մուկուչյան

---------------------------------------- Է. Ղազարյան

---------------------------------------- Մ. Ջալաթյան

---------------------------------------- Մ. Շահինյան

Քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հուրոյան